

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 24-րդ գլխով կարգավորվում են պարտավորությունների կատարման ապահովման եղանակները: Օրենսգրքի 369-րդ հոդվածով որպես պարտավորության կատարման ապահովման եղանակ առանձնացվում է տուժանքը, որն օրենքով կամ պայմանագրով որոշված այն դրամական գումարն է, որը պարտապանը պարտավոր է վճարել պարտատիրոջը՝ պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում՝ ներառյալ կատարման կետանցի դեպքում:

Օրենսգրքի վերլուծությունը հնարավորություն է ընձեռում հանգել այն եզրակացության, որ տուժանքին օրենսդրորեն վերապահված է երկակի դերակատարություն: Մասնավորապես՝ մի դեպքում տուժանքը հանդես է գալիս որպես պարտավորության ապահովման միջոց, մեկ այլ դեպքում՝ որպես պատասխանատվության միջոց: Սա ուղղակիորեն բխում է Օրենսգրքի վերլուծությունից, որում տուժանքի վերաբերյալ դրույթները զետեղվել են ոչ միայն «Պարտավորությունների կատարման ապահովումը» գլխում, այլ նաև «Պատասխանատվությունը պարտավորությունները խախտելու համար» գլխում:

Տուժանքի կիրառման տարածվածությունը պայմանավորված է ոչ միայն դրա բնույթով, այլ նաև նրանով, որ տուժանքը կորուստների փոխհատուցման համար կիրառվող ամենաարդյունավետ և դյուրին միջոցներից է: Տուժանքի բնույթը ենթադրում է, որ այն

առաջին հերթին պետք է ուղղված լինի պարտավորության խախտում թույլ տված անձի նկատմամբ ներգործության համարժեք միջոցներ և սանկցիաներ կիրառելուն: Այս համատեքստում քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված կանոնակարգումները պետք է ապահովեն անհրաժեշտ և համաչափ հավասարակշռություն քաղաքացիական շրջանառության բոլոր մասնակիցների համար՝ անկախ նրանից վերջիններս հանդես են գալիս պարտապանի, թե՛ պարտատիրոջ դերում:

Սա բխում է նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված սոցիալական պետության և սոցիալական շուկայական տնտեսության դրույթից:

Ամենաընդհանուր իմաստով սոցիալական պետության սկզբունքն ուղղված է սոցիալական արդարությանը, որն պարտադրում է պետությանն ապահովել արդար սոցիալական կարգ: Սոցիալական պետության սկզբունքը պետք է իրագործվի իրավունքի բոլոր ոլորտներում: Սոցիալական պետությունը կոչված է տարբեր միջոցառումներով մեղմելու անհատի ազատ զարգացման անհավասարությունները՝ իրականացնելով սոցիալական ապահովության, սոցիալական ապահովագրության և սոցիալական օգնության նպատակային քաղաքականություն¹:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 86-րդ հոդվածով որպես տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակ առանձնացվում է գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը, սպառողների շահերի պաշտպանությունը: Անհրաժեշտ է արձանագրել, որ գործարար և ներդրումային միջավայրի որակական բարելավումը, բարձր տնտեսական աճի ապահովմանը միտված տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղված լինեն քաղաքացիական շրջանառության բոլոր մասնակիցների շահերի պաշտպանությանը և նրանց միջև անհրաժեշտ հավասարակշռության ստեղծմանը:

Սպառողների իրավունքների պաշտպանության առումով պետք է նշել, որ այդ ոլորտին մեծ ուշադրություն է հատկացվում նաև միջազգային իրավական ասպարեզում:

¹ <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf>

Մասնավորապես՝ Միավորված Ազգերի Կազմակերպության կողմից 1985 թվականի ապրիլի 16-ին ընդունված 38/248 բանաձևում (վերաբերում է «Սպառողների շահերի պաշտպանության ղեկավար սկզբունքներ»-ին) ընդգծվում է սպառողների պահանջների բավարարման արդյունավետ ընթացակարգերի նախատեսման (2-րդ բաժին 3-րդ կետ) և իրավական այնպիսի միջոցների ձեռնարկման անհրաժեշտությունը, որոնք հնարավորություն կընձեռեն սպառողներին և կազմակերպություններին ներկայացնել իրենց պահանջներն արդյունավետ, արդար և հասանելի ընթացակարգերի միջոցով (3-րդ բաժին 32-րդ կետ)²:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ կարող ենք արձանագրել, որ սոցիալական պետության կարևոր առաքելությունն է նաև օրենսդրական կարգավորման ճանապարհով քաղաքացիական շրջանառության բոլոր մասնակիցների օրինական շահերի հավասարակշռման անհրաժեշտ մեխանիզմների նախատեսումը և գործարկումը: Թերևս այս հանգամանքով պայմանավորված են Օրենսգրքով նախատեսվել այնպիսի իրավակարգավորումներ, որոնք ուղղված են նշված նպատակի կյանքի կոչմանը:

Օրինակ՝ Օրենսգրքի 879-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է փոխառության պայմանագրի կնքման պահին տոկոսների չափի առավելագույն շեմ, որը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը, իսկ Օրենսգրքի 881-րդ հոդվածի 1-ին մասով փոխառության գումարը փոխառուի կողմից սահմանված ժամկետում չվերադարձնելու դեպքում նախատեսվում է փոխառության պայմանագրով նախատեսված տոկոսների դադարման պահանջ, իսկ այդ գումարին վճարման ենթակա են դիտարկվում միայն Օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված չափով տոկոսներ: Իր հերթին, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածը նախատեսում է քրեական պատասխանատվություն՝ պարտք տրված դրամի կամ տեսակային հատկանիշով որոշվող գույքի համար Հայաստանի Հանրապետության

² Տե՛ս *United Nations Guidelines for Consumer Protection (as expanded in 1999)*, United Nations, New York, 2003, մատչելի է http://www.un.org/esa/sustdev/publications/consumption_en.pdf հղումով՝ 22.03.2017թ. դրությամբ:

կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ ստանալու, ինչպես նաև անձի հետ նրա համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններում այլ գործարք կատարելու համար (որից օգտվել է մյուս կողմը):

Այս ամենը դիտարկելով Օրենսգրքով նախատեսված՝ տուժանքին վերաբերելի իրավակարգավորումների լույսի ներքո՝ պետք է արձանագրել, որ դրանք ներկայումս չեն ապահովում քաղաքացիական շրջանառության մասնակիցների շահերի անհրաժեշտ հավասարակշռում, վերջիններիս իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմների գործարկում, տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների միջև անհրաժեշտ հավասարակշռություն:

Սա պայմանավորված է նախ և առաջ նրանով, որ ո՛չ օրենսդրորեն, ո՛չ իրավակիրառ պրակտիկայի կողմից չեն ձևավորվել տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների միջև հավասարակշռություն կամ ողջամիտ հարաբերակցություն ապահովող հստակ չափանիշներ:

Սրա վառ ապացույցն են նաև Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) մի շարք որոշումներում տուժանքի համաչափության խնդրի կապակցությամբ արտահայտված դիրքորոշումները, որոնցում ևս հստակ չեն նախատեսվել տուժանքի համաչափության որոշմանն ուղղված չափանիշներ և այդ համաչափությունն ապահովող մեխանիզմներ:

Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը 27.11.2015 թվականի թիվ ԵՄԴ/0492/02/14 քաղաքացիական գործով արձանագրել է, որ չսահմանափակելով պայմանագրերով նախատեսվող տուժանքի գումարի չափը՝ օրենսդիրն իրավունք է վերապահել դատարաններին որոշելու հիմնական պարտավորությանը համաչափ տուժանքի սահմանները՝ ապահովելով սահմանված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների ողջամիտ հարաբերակցությունը: Դատարաններին վերապահված նման իրավունքն իրավական այն միջոցներից մեկն

է, որոնք ուղղված են անձի կողմից իր քաղաքացիական իրավունքների իրականացման չարաշահումը կանխելուն, ինչն իր հերթին համահունչ է Օրենսգրքի 12-րդ հոդվածով նախատեսված՝ իրավունքի որևէ ձևով չարաշահելու արգելքին:

Մեկ այլ գործով Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ թեև տուժանքի չափը նվազեցնելը դատարանի իրավունքն է, այդուհանդերձ, իրավունքի չարաշահումը կանխելու տեսանկյունից այն, ըստ էության, նաև դատարանի պարտականությունն է: Հետևաբար յուրաքանչյուր դեպքում **տուժանքը պակասեցնելիս դատարանն առաջին հերթին պետք է գնահատման առարկա դարձնի այն հարցը, թե պայմանագրով նախատեսված տուժանքը որքանով է անհամաչափ պարտավորության խախտման հետևանքների:** Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ տուժանքի չափի նվազեցումը չի կարող նշանակել **տուժանքի վճարումից ընդհանրապես ազատում կամ այնպիսի չափով նվազեցում**, որը կիմաստագրկի տուժանքի ինստիտուտը և չի ծառայի իր նպատակին³:

Վերահաստատելով և զարգացնելով տուժանքի ինստիտուտի վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը 2015 թվականի թիվ ԵՄԴ/0492/02/14 քաղաքացիական գործով հավելել է, որ դատարանն Օրենսգրքի 372-րդ հոդվածի հիմքով իրավունք ունի *պակասեցնել միայն տուժանքի գումարի չափը, այլ ոչ թե նվազեցնել պայմանագրով (համաձայնագրով) սահմանված տուժանքի տրոսսադրույքը:*

Վճռաբեկ դատարանի նախադեպային պրակտիկայի ուսումնասիրությունից կարող ենք եզրահանգել, որ որպես տուժանքի անհամաչափության «ակնհայտության» գնահատման հիմնական չափանիշ առանձնացվել է տուժանքի

³ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0930/02/13 քաղաքացիական գործով 18.07.2014 թվականի որոշումը:

չափի և պարտավորության խախտման հետևանքների ողջամիտ հարաբերակցությունը, ինչը վկայակոչված խնդիրների լուծման համար բավարար չէ:

Տուժանքի նվազեցման հնարավորության առկայությունը պայմանավորված է սոցիալական խնդիրների լուծման, պայմանագրի կողմերի միջև անհրաժեշտ հավասարակշռություն ապահովելու, պայմանագրի խոցելի կողմին պաշտպանելու անհրաժեշտությամբ⁴:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատարաններն անդրադառնում են տուժանքի չափի նվազեցման հարցերին՝ մի շարք դեպքերում էականորեն նվազեցնելով տուժանքի չափերը⁵:

Օրենսգրքի՝ տուժանքի կապակցությամբ նախատեսված կարգավորումները վկայում են, որ ներկայումս սահմանված չէ պայմանագրային տուժանքի առավելագույն շեմ: Սա ոչ միայն կարող է հանգեցնել Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների հավասարության սկզբունքի խախտման՝ խաթարելով տուժանքի՝ որպես պարտավորության ապահովման միջոցի էությունը, այլ նաև հանգեցնել պարտատիրոջ կողմից իրավունքների չարաշահման հնարավոր դեպքերի, ինչի արգելքն ամրագրված է Օրենսգրքի 12-րդ հոդվածով: Այս հարցն առավել արդիական է դառնում հատկապես այն հանգամանքի հաշվառմամբ, որ Օրենսգրքի

⁴ Տե՛ս **Бондаренко, Н.Л.** "Снижение неустойки судом: понятие и назначение." Журнал российского права 11, 203, 2013, էջ 69:

⁵ Տե՛ս օրինակ՝ թիվ ԵԱՆԴ/0867/02/15, թիվ, ԵԱՆԴ/0868/02/15, թիվ ԵԱՆԴ/1276/02/14, թիվ ԵԱՆԴ/0937/02/15, թիվ ԵԱՔԴ/2858/02/15 և թիվ ԵԱՔԴ/4391/02/14 քաղաքացիական գործերը: Ընդ որում, նշված գործերով դատարանները տուժանքի չափերը նվազեցրել են գրեթե երկու կամ երեք անգամ: Օրինակ՝ թիվ ԵԱՔԴ/2858/02/15 քաղաքացիական գործով դատարանը 3.821.625 ՀՀ դրամի չափով տույժը նվազեցրել է և այդ մասով պահանջը բավարարել միայն 1.000.000 ՀՀ դրամի չափով:

410-րդ հոդվածի ուժով պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար տուժանք սահմանված լինելու դեպքում պարտատիրոջն ընձեռվում է նաև վնասները տուժանքով չծածկված մասով հատուցելու պահանջ ներկայացնելու հնարավորություն:

Վկայակոչված խնդիրների լուծման համար նախ և առաջ անհրաժեշտ է սահմանել պայմանագրային տուժանքի առավելագույն չափ՝ այն նվազեցնելու իրավասություն ընձեռելով նաև Ֆինանսական համակարգի հաշտարարին՝ հաշվի առնելով իրավունքի չարաշահման հնարավոր դեպքերի բացառման անհրաժեշտությունը, Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից քննվող գործերի մեծաթիվ լինելը և այդ գործերի քննության արդյունավետությունը:

Հարկ է նշել, որ Ֆինանսական համակարգի հաշտարարին նման իրավասություն ընձեռելը բխում է «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդհանուր տրամաբանությունից, որի 1-ին հոդվածը Ֆինանսական համակարգի հաշտարարին ընձեռում է ֆինանսական կազմակերպությունների դեմ հաճախորդների ներկայացրած մասնավոր իրավահարաբերություններից բխող պահանջների քննության իրավասություն:

Դեռ ավելին, այսպիսի պահանջների քննությունը Ֆինանսական համակարգի հաշտարարին վերապահելը պայմանավորված է Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ներկայացված պահանջներն առանց անհարկի ձգձգումների քննելու, դատարանների գերծանրաբեռնվածության խնդիրը լուծելու և ընդհանուր առմամբ նման պահանջների քննության գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությամբ: Բացի այդ, նույն օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից պահանջն ընդունելու, քննելու և որոշում կայացնելու կապակցությամբ հաճախորդից որևէ վճար չի գանձվում:

Օրենսդրությամբ անհրաժեշտ է նաև նախատեսել տուժանքը նվազեցնելու դեպքում պարտատիրոջ կողմից վերահաշվարկ կատարելու պարտականություն՝ տուժանքի նվազեցված չափին համապատասխան գումարը պարտապանին վերադարձելու համար:

Մյուս խնդիրը, որն անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել, առնչվում է պարտքի բռնագանձման և գրավի առարկայի իրացման գործընթացների համատեքստում տուժանքի վճարմանը:

Պարտքի բռնագանձման և գրավի առարկայի իրացման գործընթացների կապակցությամբ Օրենսգրքում առկա իրավակարգավորումները կարող են առաջացնել բազմաթիվ խնդիրներ՝ հաշվի առնելով օրենսդրական կարգավորման որոշակի անհստակությունների և բացերի առկայությունը: Մասնավորապես՝

1. պարտապանի կողմից պարտավորությունը խախտելու դեպքում գրավառուի կողմից պարտքի բռնագանձման պարագայում (այդ թվում՝ արտադատական կարգով)՝ հաշվի առնելով այն, որ օրենսդրությամբ նախատեսված չէ այդ գործընթացն սկսելու հստակ ժամկետ.

2. գրավի առարկայի արտադատական կարգով իրացման դեպքում՝ հաշվի առնելով այն, որ օրենսդրորեն չի կարգավորվում այն հարցը, թե Օրենսգրքի 249 հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությամբ նախատեսված երկամսյա ժամկետը լրանալուց հետո երբ պետք է գրավառուն սկսի գրավի առարկայի արտադատական կարգով իրացումը (այդ թվում՝ ի սեփականություն ընդունելու եղանակով)⁶:

⁶ Հարկ է նշել, որ օրինակ՝ Մոլդովայի քաղաքացիական օրենսգրքի 491-րդ հոդվածը սահմանում է, որ գրավատուն պետք է ձեռնամուխ լինի գրավի առարկայի իրացմանը առանց անհարկի ձգձգումների, ողջամիտ շուկայական գնով՝ հաշվի առնելով գրավառուի շահերը:

Դա այն պարագայում, երբ գրավի առարկայի իրացման գործընթացն ի սկզբանե ուղղված է պարտատիրոջ պահանջների առաջնահերթ բավարարմանը և հետևաբար հիմնավոր չէ այդ գործընթացի ձգձգումը որևէ պատճառաբանությամբ⁷:

Վերը թվարկված երկու դեպքերը մտահոգիչ են այն առումով, որ գործող կարգավորումները թույլ են տալիս այնպիսի իրավիճակի ստեղծում, երբ.

1. գրավառուն պարտքի բռնագանձմանը ձեռնամուխ լինի ոչ թե պարտավորության խախտումից անմիջապես հետո կամ հնարավոր սեղմ ժամկետում, այլ շատ ավելի ուշ, ինչը կարող է հանգեցնել նրան, որ խախտման պահից մինչև պարտքի մարմանն ուղղված գործողությունների ձեռնարկումն ընկած ժամանակահատվածում պարտավորության խախտման համար սահմանված տուժանքները (օրինակ՝ բանկային պրակտիկայում օրական տուժանքների չափերը հիմնականում տատանվում են չվճարված գումարի 0,1-0,5⁸ տոկոսների տիրույթում) սկսեն հավասարվել և հաճախ էականորեն գերազանցել պարտքի մայր գումարը.

2. գրավառուն բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնելուց հետո գրավի առարկան չիրացնի մինչև այն պահը, երբ պարտավորության խախտման հետևանքով հաշվեգրվող տուժանքների միջոցով ապահովված պարտավորության չափը հավասարվի կամ գերազանցի իրացման ենթակա գրավի առարկայի արժեքը⁹: Այլ կերպ ասած՝ նման ձևով արհեստականորեն կվերացվի գրավի

⁷ 01.07.2011 թվականի թիվ ԵԿԴ/0704/02/09 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանն արտահայտել է դիրքորոշում այն մասին, որ գրավառուն իր պահանջները պետք է բավարարի նախ գրավի առարկայի արժեքից, որի անբավարարության դեպքում նոր միայն կարող է պակաս գումարն ստանալ պարտապանների այլ գույքից: Դրանից Վճռաբեկ դատարանը հետևության է հանգել, որ քանի դեռ չի լուծվել գրավի ամբողջ առարկայի վրա բռնագանձում տարածելու հարցը, և պարզ չէ, թե գրավի առարկայի իրացումից ստացված գումարն արդյոք բավարար չէ պարտատիրոջ պահանջները բավարարելու համար, պարտապանի այլ գույքի վրա բռնագանձում չի կարող տարածվել:

⁸ Տե՛ս, օրինակ՝ ԱՐԴ/3639/02/16, ՍԴ/0417/02/16, ԱՐԱԴ2/0074/02/14 դատական գործի նյութերը:

⁹ Այս համատեքստում ուշագրավ է 17.04.2009 թվականի ԵԲԴ/0595/04/08 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումը, որտեղ արձանագրվել է, որ առանց դատարան դիմելու գրավադրված գույքն իրացնելը բանկի հայեցողական իրավունքն է, այլ ոչ

առարկայի արժեքի և դրանով ապահովված հիմնական պարտավորության չափի անհամապատասխանությունը, իսկ այդ հանգամանքը կզրկի գրավատուներին գրավի ժամանակին իրացման պայմաններում պարտքի չափը գերազանցող գրավի առարկայի արժեքն ստանալու օրինական ակնկալիքից:

Նշված եզրահանգումը հավաստվում է նաև Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2017 թվականի ապրիլի 27-ի ՎՀ/2738-17 գրությամբ ներկայացված տեղեկատվությամբ¹⁰, որի ուսումնասիրությունը վկայում է, որ, օրինակ, գրավառու բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնելուց հետո, որպես կանոն, իրավունքի պետական գրանցման դիմումները ներկայացվում են մեկ տարվա ընթացքում, իսկ առանձին դեպքերում՝ երկու կամ երեք տարվա ընթացքում: Խնդրահարույց է նաև այն, որ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2017 թվականի մայիսի 12-ի ՄՍ/3029-17 գրությամբ ներկայացված բռնագանձման ծանուցումներից երևում է, որ, օրինակ, բանկային պրակտիկայում հանդիպում են նաև դեպքեր, երբ բռնագանձման ծանուցումը գրավատուներին ուղարկվում է օրենսդրությամբ նախատեսված ժամկետից շատ ավելի ուշ, անգամ մեկ տարի հետո:

Վկայակոչված խնդիրները պետք է դիտարկել Օրենսգրքի 11-րդ հոդվածի իրավակարգավորման լույսի ներքո, որը սահմանում է, որ քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ:

պարտականությունը: Ուստի տվյալ դեպքում կիրառելի չեն նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ իրավունքի չարաշահման վերաբերյալ 12-րդ հոդվածի դրույթները, քանի որ գործում առկա որևէ ապացույց չի վկայում իրավունքի չարաշահում թույլ տալու մասին:

¹⁰ Տեղեկատվությունը վերաբերում է 2016 թվականի չորրորդ և 2017 թվականի առաջին եռամսյակների ընթացքում բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից հիփոթեքի առարկա անշարժ գույքերի նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հիմքով հիփոթեքի առարկայի նկատմամբ գրավառուին անցած սեփականության իրավունքի պետական գրանցմանը:

Քաղաքացիների և իրավաբանական անձանց հրաժարվելն իրենց իրավունքներն իրականացնելուց չի հանգեցնում այդ իրավունքների դադարման՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Այսինքն՝ Օրենսգիրքը նախատեսում է քաղաքացիական իրավունքի սուբյեկտների կողմից իրենց իրավունքներն իրականացնելուց հրաժարվելու դեպքում դրանց դադարման հնարավորություն՝ օրենսդրությամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում:

Վկայակոչված խնդիրների լուծման համար անհրաժեշտ է օրենսդրական մակարդակով ամրագրել սահմանված ժամկետում պարտքի բռնագանձման և գրավի առարկայի իրացման գործընթացն սկսելու հստակ ժամկետներ, որոնց խախտումը կունենա իրավադադարեցնող նշանակություն՝ դրանից հետո հաշվեգրվելիք տոկոսների մասով:

Բացի այդ, հաշվի առնելով պայմանագրի ազատության սկզբունքի էությունը, պարտապանի և պարտատիրոջ փոխադարձ համաձայնությամբ բռնագանձման կամ գրավի առարկայի իրացման գործընթացը նախատեսված ժամանակահատվածից ավելի ուշ սկսելու հնարավորության ընձեռման կարևորությունը, անհրաժեշտ է նախատեսել պարտապանի և պարտատիրոջ փոխադարձ համաձայնությամբ այդ գործընթացը երկարաձգելու հնարավորություն:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) անհրաժեշտ է նաև ամրագրել գրավառուի պարտականությունը գրավատուին ծանուցելու գրավի առարկայի՝ ի սեփականություն ընդունելու կամ իրացման գնի, օրվա, գրավով ապահովված պարտավորության մարման չափի, իսկ պարտավորությունը լրիվ չմարվելու դեպքում՝ պարտքի մնացորդի մասին, քանի որ ներկայիս պայմաններում գրավառուները նման պարտականություն չեն կրում, ինչը կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակների առաջացման, երբ վերջիններս չձեռնարկեն որևէ գործողություն, իսկ գրավատուն իր հերթին տեղյակ չլինի պարտավորության մարման

չափի, պարտքի մնացորդի կամ գրավի առարկայի ի սեփականություն ընդունելու կամ իրացման գնի վերաբերյալ:

Միաժամանակ, անհրաժեշտ է չարաշահման հնարավոր բոլոր դրսևորումները կանխելու, միասնական մոտեցում որդեգրելու համար ամրագրել նաև ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվող տոկոսների առավելագույն չափ՝ հաշվի առնելով այն, որ Օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսվում է ըստ համապատասխան ժամանակահատվածների Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանաձև բանկային տոկոսի հաշվարկային դրույքների համապատասխան տոկոսները հաշվարկելու պահանջ, մինչդեռ նույն մասի երկրորդ պարբերությամբ հնարավորություն է ընձեռվում օրենքով կամ պայմանագրով նախատեսել տոկոսի այլ չափ, ինչը չի բացառում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանաձև բանկային տոկոսի հաշվարկային դրույքները գերազանցող տոկոսներ նախատեսելու դեպքերը:

Վերոշարադրյալը վկայում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում համարժեք կարգավորումներ նախատեսելու անհրաժեշտության մասին:

Առաջարկվող կարգավորման բնույթը

Նախագծով նախատեսվում են հետևյալ հիմնական իրավակարգավորումները՝

✓ ամրագրվում է գրավառուի պարտականությունը պատշաճ ձևով ծանուցելու գրավատուին (պարտապանին, եթե գրավատուն պարտապան չէ) գրավի

առարկայի՝ ի սեփականություն ընդունելու օրվա և գնի, գրավի առարկայի իրացման օրվա և գնի, պարտավորության մարման չափի, պարտքի մնացորդի մասին.

✓ նախատեսվում է պայմանագրով որոշված տուժանքի տարեկան առավելագույն չափ.

✓ ֆինանսական համակարգի հաշտարարին ևս ընձեռվում է պարտավորության խախտման հետևանքներին տուժանքի ակնհայտ անհամաչափ լինելու դեպքում այն պակասեցնելու իրավասություն.

✓ նախատեսվում է, որ տուժանքի չափը պակասեցվում է, եթե պարտապանը «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հանդիսանում է շահառու, պարտապանը ներառված է սոցիալապես անապահով ընտանիքների ցանկում, պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով, և օրենքով կամ պայմանագրով անհաղթահարելի ուժը չի ազատում պատասխանատվությունից.

✓ նախատեսվում է պարտատիրոջ պարտականությունը դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու կամ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը պարտադիր դառնալու պահից վերահաշվարկ կատարելու և վճարված տուժանքի պակասեցված չափին համապատասխան գումարը պարտապանին վերադարձնելու վերաբերյալ.

✓ նախատեսվում է պարտավորության խախտման օրվանից եռամսյա ժամկետում գրավառուի կողմից պարտքի բռնագանձման գործընթացը չսկսելու դեպքում եռամսյա ժամկետին հաջորդող ժամանակահատվածի համար տուժանք չհաշվարկելու, ինչպես նաև գրավառուի կողմից առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման ծանուցումը հանձնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում գրավի առարկան ի սեփականություն չանցնելու, ուղղակի վաճառքով

չիրացվելու, առաջին աճուրդը չանցկացվելու դեպքում երկամսյա ժամկետին հաջորդող ժամանակահատվածի համար տուժանք չհաշվարկվելու պահանջ.

✓ գրավատուին և գրավատուին տրվում է պարտավորության խախտումից հետո բռնագանձման կամ գրավի առարկայի իրացման գործընթացն սկսելու ժամկետը երկարաձգելու մասին համաձայնություն կնքելու հնարավորություն.

✓ նախատեսվում է դրամական պարտավորությունները չկատարելու դեպքում պայմանագրով նախատեսված տոկոսի չափի առավելագույն շեմ:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը

Նախագծի մշակվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի կողմից:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման դեպքում կսահմանվի պայմանագրային տուժանքի առավելագույն շեմ և չափ, տուժանքի պակասեցման իրավասություն կընձեռվի նաև Ֆինանսական համակարգի հաշտարարին, կստեղծվեն այնպիսի իրավական երաշխիքներ, որոնք կապահովեն քաղաքացիական շրջանառության որոշակիությունը, քաղաքացիական շրջանառության մասնակիցների վարքագծի բարեխղճությունը և գրավով ապահովված պարտավորության չափը գերազանցող գրավի առարկայի արժեքի տարբերության վերադարձը գրավատուին: